

Փոխանակման ծրագրին մասնակցել ցանկացող ուսանողներին

ՀԳՊԱ-ն ունի երկկողմանի համագործակցության պայմանագրեր մի շարք արտասահմանյան հաստատությունների հետ, որոնց շրջանակներում իրականացնում է նաև ուսանողների փոխանակում:

Ստորև ներկայացված են փոխանակման ծրագրով կարճաժամկետ ուսման մեկնելու համար ուսանողին առաջադրված պայմաններն ու պահանջվող փաստաթղթերը:

Ուսանողը կարող է դիմել

- գործընկեր արտասահմանյան բուհում բակալավրի 2-րդ և 3-րդ կուրսերում սովորելու համար
- գործընկեր արտասահմանյան բուհում մագիստրատուրայի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում և 2-րդ կուրսի 1-ին կիսամյակում սովորելու համար
- եթե ունի բարձր առաջադիմություն. բակալավրի ծրագրով սովորողների միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է լինի առնվազն 3.4, իսկ մագիստրատուրայի ծրագրով սովորողների միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է լինի առնվազն 3.6
- եթե տիրապետում է օտար լեզվի.
 - ռուսերեն
 - անգլերեն B1
 - ֆրանսերեն A2 բակալավրի համար և B1 մագիստրատուրայի համար
 - իտալերեն A2 բակալավրի համար և B1 մագիստրատուրայի համար

Պահանջվող փաստաթղթերն ու ժամկետները մեկնող ուսանողների համար

- առաջին կիսամյակը արտասահմանյան բուհում սովորելու համար ՀԳՊԱ ուսանողը պետք է դիմի միջազգային կապերի բաժին փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ը ընկած ժամանակահատվածում, իսկ 2-րդ կիսամյակի համար՝ սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 10-ը:
- Պետք է գրի ռեկտորի անունով դիմում
- Ներկայացնի երաշխավորագիր-նամակ ամբիոնի կամ դեկանի կամ դասավանդող դասախոսի կողմից
- Պորտֆոլիո (pdf կամ Power Point ֆորմատով), որում պետք է ընդգրկված լինի ուսանողի լավագույն 15-20 աշխատանքները, և դրանց նկարագրերը (անվանումը, նյութը, չափերը, տարեթիվը) անգլերենով կամ տվյալ հաստատության կողմից պահանջվող այլ լեզվով
- Ինքնակենսագրություն (Curriculum Vitae)
- Երկու լուսանկար (3x4 սմ չափի)

- Անձնագիրը և անձնագրի պատճենը (անձնագիրը վերադարձվում է տեղում՝ պատճենի հետ համեմատելուց հետո)
- Մոտիվացիոն նամակ (Motivation letter)
- Ակադեմիական տեղեկանք՝ (ուսանողների հաշվառման բաժնից) և դրա նոտարով հաստատված թարգմանությունը:
- Լեզվի իմացության վկայական՝ (Language certificate) ըստ տվյալ օտարերկրյա ուսումնական հաստատության պահանջների (նայել վերևում նշված լեզուները):

ՀԳՊԱ ժամանող ուսանողի ընդունման համար պահանջվող փաստաթղթերը և ավարտելուց հետո ՀԳՊԱ-ի կողմից տրամադրվող փաստաթղթերը՝

Արտասահմանյան հաստատությունից կարճաժամկետ սովորելու համար ՀԳՊԱ ժամանող ուսանողից պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

- Ուսանողը լրացնում է ՀԳՊԱ-ի դիմում հայտը փոխանակման ծրագրով կարճաժամկետ ուսումնառության համար և էլեկտրոնային փոստով, ստորագրված հետ ուղարկում ՀԳՊԱ, (օրիգինալը բերում է իր հետ):
- Արտասահմանյան բուհը էլեկտրոնային փոստով ՀԳՊԱ միջազգային կապերի բաժնի պատասխանատուին է ուղարկում փոխանակման ծրագրի շրջանակներում ՀԳՊԱ-ում ուսումնառելու նպատակով դիմած ուսանողի՝ անձնական տվյալները, ֆակուլտետը, մասնագիտությունը ու ուսումնական տարին և/կամ կիսամյակը: Կից ուղարկվում է նաև ուսանողի անձնագրի պատճենը, պորտֆոլիոն, ակադեմիական տեղեկագիրը, ուսանողի մոտիվացիոն նամակը, երաշխավորագիրը:
- Արտասահմանյան բուհը և ուսանողը ընտրում են ՀԳՊԱ-ի առաջարկած ցանկից համապատասխան առարկաները և ուղարկում ընտրված առարկաների, դասընթացների ցանկը, որոնք ուսանողը ուսումնասիրելու է ՀԳՊԱ-ում ուսումնառելու ընթացքում: Ցանկում կարող են ընդգրկված լինել նաև այլ մասնագիտությունների և կուրսերի սահմաններում ՀԳՊԱ-ում իրականացվող դասընթացներ, որոնց ուսանողը կարող է մասնակցել, եթե դրանք ժամանակի առումով չեն համընկնում պարտադիր ընտրված դասընթացների հետ, կամ չունեն այլ սահմանափակումներ կամ մասնակցողներին ներկայացվող պահանջներ:
- Արտասահմանյան բուհի, ժամանող ուսանողի և ընդունող հաստատության միջև կնքվում է եռակողմ պայմանագիր, որը համաձայնեցվում է նախօրոք բոլոր կողմերի հետ և տրամադրվում միջազգային կապերի բաժնի կողմից, 3 հավասարազոր օրինակից:

ՀԳՊԱ-ում ուսումնասիրությունից հետո ուսանողին տրվում է՝

- Ակադեմիական տեղեկանք, որը պարունակում է ՀԳՊԱ-ում ուսումնասիրված դասընթացները, դրանց կրեդիտները, ժամաքանակը և ուսանողի գնահատականները, և կից տրվում է ՀԳՊԱ գնահատման համակարգի նկարագիրը: